ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<11>> ապրիլ 2019թ N16

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՎ ՎԱՅՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1794-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 30-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի մարտի 6-ի « ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի օգոստոսի 3-ի N 115-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին » N 31-Ն հրամանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Եղեգնաձորի և Վայքի տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին » N89 որոշմամբ հաստատված N1 և N2 հավելվածների 15-րդ կետը «մասնագետներ են» բառից հետո լրացնել «, բացառությամբ գործակալության պետի,» բառերով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ